ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 72-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ ,43-րդ հոդվածներով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 22,24-րդ կետերով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ) ենթակետով, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների դրույթներով և հաշվի առնելով Արփեն Արշալույսի Խաչատրյանի (մուտք՝ 2021 թվականի օգոստոսի 2-ի N 339) դիմումը՝
որոշում եմ.

1.Թումանյան քաղաքի 5-րդ փողոցի թիվ 9 շենքի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման 0,0027 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 27.0քմ արտաքին մակերեսով ավտոտնակը համարել Թումանյան համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական:
2.Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Հողամասի սահմանները որոշվում են <<Սարգիս Թամազյան>> ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4.Շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, Թումանյան քաղաք,5-րդ փողոց,թիվ 9/28 ավտոտնակ:
5.27.0 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրանով զբաղեցված,պահպանման և սպասարկման համար առանձնացված 0.0027 հա մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով առաջարկել կառույցն իրականացնող անձին՝ Արփեն Արշալուսի Խաչատրյանին:
6.Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.05.2006թ.թիվ 912 –Ն որոշման 4-րդ և 35-րդ կետերով սահմանված կարգի և արժեքների համաձայն.
1/ շինության օտարման գին սահմանել 27.0 քմ x 350 դրամ = 9450 դրամ,
2/ հողի օտարման գին սահմանել 27,0 քմ x 96 դրամ = 2592 դրամ,
ընդամենը՝ 12042 դրամ:
7.Հայաստանի Հանրապետության Կառավարության 8.05.2006թ.թիվ 912-Ն որոշման 35.1 կետի համաձայն սահմանված չափերով ձևավորված վաճառքի գնին հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման հա մար իրականացված վճարները՝ ընդամենը 26000 դրամ:
8.Արփեն Արշալույսի Խաչատրյանի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում գնման նախապատվության առաջարկը չընդունելու կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին

ներկայացնել գրավոր առաջարկություն անշարժ գույքը վարձակալելու վերաբերյալ:
Վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն տնօրինել 18.05.2006թ.թիվ 912-Նորոշման 37-րդ կետով սահմանված կարգով:
9.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. օգոստոսի 9
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 73-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>>N104-Լ հրամանով , հիմք ընդունելով Թումանյան քաղաքի բնակչուհի Սուսաննա Սարգսի Հովհաննիսյանի դիմումը,սեփականության իրավունքի N 1327010 վկայականը՝ տրված 30.06.2004թ., քաղաքշինության և հողօգտագործման մասնագետի առաջարկությունը՝

որոշում եմ.

1.Թումանյան քաղաքի բնակչուհի Սուսաննա Սարգսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի,Թումանյան քաղաքի (ծած.՝06-004-003-001-001-012) ծածկագրով բնակարանին՝ մակերեսի չափը՝ 30,3 քմ տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,Թումանյան քաղաք,6-րդ փողոց, շ.10,բն.12) հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021 թ. օգոստոսի 9
ք.Թումանյան